

3386

ՄԻՐԱՍ

ՄԱՄԵՆ ՈՒ ԱՇԵՆ

ՊԵՏԿՐԱՏ



Ս Ի Ր Ա Ս

# ՄԱՄԵՆ ՈՒ ԱՇԵՆ

Քրդական ժողովրդական պոեմ



ԳՐԱԴԱՐԱՆ ԿՐԴԱՆԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՐԵՂԱՆ 1 9 3 4

Եկաթենք յիվ շապիկը Հովհ. Մավաթչի

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան

Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանյան

Սրբագրիչ՝ Հ. Մանավադյան

Դրավիտ 8626, պատվեր 1096, հրատ. 3059, տիրած 5000

Հանձնված է արտադրության 5 հուլիսի 1934 թ.

Ստորագրված է տպելու 23 հուլիսի 1934 թ.

Են վոր տղայի սիրտը չմաշեց, են վոր ջահելի սիրտը չմաղկտաց են գիշեր:

Են գիշեր, պայծառ գիշեր, լուսնից ել լուս կուտար Աշեն, են գիշեր կարոտի գիշեր, խարույկից ել թնժ ցոլք կուտար Աշեն:

Հսկարտ եր նա իր հայրենի ժայռերի վերասլաց արծվի պես, խրոխտ եր նա հաղթանակող ասպետի պես. բարձր եր բոյը, ինչպես

չինարը և կախարդիչ իր նայվածքը թուշուն-  
ներն հրապուրող ոձի պես: Թուխ դեմքը դրա-  
վիչ եր դարնան արևի շողքից և դայրույթի  
պահին անխնա իրենց դաշտերին փչող հան-  
կարծահաս մրրկի նման:

Նսպես եր Աշեն:

Մահալի մեջ մենակ Մամեն եր, որ կպտվ  
Աշենյի սրտին, ինքն Վ Մամենյի: Մամեն, Զո-  
դանի պահած Մամեն, ինչքան աղջիկների աչ-  
քը ջուր կտրեց Մամեն, ինչքանի ել քնահա-  
րամ արեց Մամեն:

Ու յերբ Մամեն տիրացավ Աշենյին նոր Զո-  
դանը հանդատացավ, պառայված յերակն՝ բուժ  
յեռաց արյունն ու նորից աշխուժացավ իր ջա-  
հել որերի թափով: Կարծես եղ ել են Զոգանը  
չեր, վոր տաս տարի աղայի տավարի աթարը  
կրեց, վոր գիշեր ու ցերեկ աղայի կանանց դա-  
րավաչ յեղավ, մինչև մեջքը թոնրումը ծռած՝  
աղային բոյե-բոյ լավաչ թխեց ու իր գրտնակ  
թեփերն աղայի ձծուժը դարկելով թոռմեց,  
մինչև Մամեն բերան եկավ:

Քնան տարեկան Մամեն տասնութ տարե-  
կան Աշենյի հետ ենպես սաղական եր, որ յերկ-  
նուց սլացող գիշատիչ բաղեն ել նրանց տես-  
նելիս բերնի վորսը թողնում եր ու մալույ-մա-  
լուլ սիրողներին նայում, որ փրփրաբաշ նր-  
ժույգն առջևի վորտքը դարկում եր գետնին ու  
իր մոլեգնած խոյանքը դադարեցնում նրանց  
չոյանքի ներքո:





Են քուրդն որ քրտնել եր Զողանի պես, են որ Մամեյի Թայտաշն եր ու Աշեյի հետ ջուր եր կրել աղբյուրից, — ենոնց վոխն արևի մեկ փաթ տվ'ց, մեկել որն ամենքն ել խնդացին ու մխիթարվան Մամեյի ու Աշեյի բախտավորությամբ:

Դահար աղեն եր, որ չծիծաղեց, Դահար աղեն եր որ փրփրեց անսանձ ձիու պես: Նատենսում ե հիմի իր ղուլամի տղին ընկերացած Աշեյի հետ. յերկուսով ել նրանք ավելի համարձակ են քան իր ամենակտրիչ իգիթը: Ես են Աշեն չեւ, որ մենակ՝ աջ բաղկով ենպես հրեց Դահարին, որ մինչև հիմա ել գլուխը պտուտ ե դալիս: Ղուլամի թուլեն դիմադրել ե աղային, իգիթի պես ինքն ե պաշտպանել իրան փախցրել փորձողների դեմ, — և ամենքից ատելությամբ ու կռուիտ նա վարվել ե իրա՝ ելի ամենամեծ աղայի, Դահարի հետ: Բա ել վոր որվա համար ե իր աղայությունը, որ ղուլամն իր առջևը կտրի, իր աչքը կտրածին ձեռ դնի, — շատ ել Աշեն հաղթվել ե Մամեյից, շատ ել Մամեն տիրացել ե ելի փերուն, — չե որ ինքն աղա յե ու ամեն բարիք նախ ինքը պիտի վայելի:

Ու Դահարը հրամայեց ելի կտրիչներին հավաքվել ու ամենից առաջ Մամեյին կանչեց:

— Տեսնում եք ես արևը, — ասաց նա հպարտ ու հրամայող, — մինչև մեկ ել նա կանդնի կստեղ, դուք պիտի շեյխի Զավադի ղուլամ-

ների առաջի շարքումը լինե՞ք, որ ղիլանցիներին մանրե՞ք, ա՛յ, Թոնրից քաչած են փոշու պես: Դե չարժվեցե՞ք խողենն<sup>1)</sup> ձեզ քոմակ:

Ազի հրամանն ու կամքն եր, անառարկելի որենքը և Մամեն տուն դարձավ կոտրած սրբ-տով:

Են բազեյի պես սուր ու կրակոտ աչքերից ցողեց յերկու կաթիլ արցունք, — չե, ասեց հտո Մամեն իր մտքում, — Թող Աչեյի ու Դայեյի<sup>2)</sup> սիրտը չկոտրի, — ծիծաղեց ուրախ ու ասաց.

— Աչե, քու Թեին ել դվաթ տուր, որ նա Մամեյի քոլոզը գե՞ք պահի, — ու համբուրեց Աչեյի տրտմած յերեսը, գգվեց նրա մկնչու եղ չխոնհարված աչքերը:

— Դիյա մա, — ասեց նա մորը գիրկն առնելով, — ղուլամի պարտքն և, պիտի տամ: Աչեյի սիրտը տես, չկոտրի, քու մաղերն ել սե տեսնեմ...

Ու յերբ Մամեն իր ձիու մեջքին համբեն կշափեր, — Դահար աղեն Թեթե սրտով լմե-  
ծի<sup>3)</sup> նստավ, Աչեն ու Զողանն ել մեկ-մեկի սիրտ չկոտրելու համար կոկորդում խեղդեցին վաբարոզ արցունքները:

1) Աստված

2) Մայր, մայր, կի

3) Ազբթ





Յոթ տարին բոլորեց—յոթն անգամ չորս-  
ցավ ուռին ու յերբ ուղեց յոթերորդ անգամ  
դալարել, Աշեն մալուլ—մալուլ դարձան կարո-  
տով պապակեց իր Մամեյին: Դահար աղեն  
քառասուն տեսակ ջուհար դրեց, քառասուն  
տեսակ խոստում արեց, քառասուն ձևի ել փախ-  
ցընելու փորձ արեց,—ամա Աշեն են Աշեն եր,  
որ աղի բերանն սկի վոսկոռ ել չգցեց, որ  
իդիթի պես հպարտ մնաց ու Մամեյի քոլոզը  
դիք պահեց, Ջոզանին սիրտ տվեց, նրանից  
սիրտ առավ ու իրանց ճակատի քրտինքը թա-  
փելով նամարդին մուխտաջ չեղան:

Աշեն, պայծառ Աշեն, լուսնի պես բոլո-  
րակ Աշեն փանջարեն<sup>1)</sup> ելավ իրիկվա հովին,  
թիկնեց, յերկու ամիսի մեջն առավ արեւից  
կարմրած թշերն ու երկեն ճամբեն նայեց:

Ես են ճամբեն եր, որ տարավ Մամեյին,  
ես ճամբով եր, որ որեն հազար մարդ  
կերթար ու ենդուց ել ավել հետ կդառնար  
ու ամեն որ Աշեն ջուհար կհարցներ իր Մա-  
մեյից:

Հիմի ի՛նչ չափ դցած դալիս ե են բող ձիա-  
վորը, քրտինքը թրջել ե նրա ճակատը ու բա-  
րակ արխալուղը ֆռռում ե քամու առաջ: Նա  
արդեն մոտեցել ե փանջարին ու ոտար ոտար  
նայում ե: Աշեյի սիրտը թրթռաց պատուտակը

1) Կուսամուս

պատուող կոկոնի պես ու նա ձեռքը շարժելով  
ասաց:

— Հասիարո<sup>1)</sup> արի տեսնեմ ո՞վ ես, ով չես.  
իմ Մամեն ես ա յոթ տարի դինվոր ա, արի  
մեր հացը կտրիր, թե ջուհաբ ունես՝ լավ, թե  
չե՛՝ ճամբեդ հաջող:

— Հացդ անպակաս լինի ըոնդո՞ւ<sup>2)</sup>. յես  
իշավ<sup>3)</sup> քո ջանի մեյվանն<sup>4)</sup> եմ, — եսպես պա-  
տասխանեց են ձիավորը:

Յոթ տարվա մեջ ես մեյվանն ամենքից հա-  
մարձակն եր, — Աչեն չնեղացավ նրա խոսքե-  
րից, դուրս վազեց, փնջացող նժույգի սանձը  
բռնեց ու յերբ ձիավորն իջավ, ձին տարավ ա-  
խոռը, կապեց և խոտ ու դարի տվեց:

Ու յերբ յետ յեկավ՝ ոտաբախանին իր ո-  
ղեն առաջնորդեց, նա ել թվանքն ու թուրը  
պատից կախեց, ու մեկ ել որ ձեռքը տարավ  
երկեն քոլոզը հանելու, թաց ղլուխը չփելու  
համար, Աչեյի սրտին լեռնացած յոթ տարվա  
կարոտը հորդեց դարձան գետի պես ու նա  
նույն թափով ընկավ աղայի գիրկը:

— Վայ դու անհոգի Մամե, Կո ինչ ֆան-  
դով տուն կուգաս:

— Բա ո՞վ կարող եր քո ջանին մեյվան լի-  
նել, հա՞ իմ իգիթ հարս:

1) Ձիավոր:

2) Գեղեցկահի:

3) Ես գիշեր:

4) Հյուր:



Նրա պառաւ յերակներում արյունը դեռ  
առույգ էր վազում, դեռ թևերը պահել էյին  
իրենց զորությունը, Զոզանն եւ ուներ իր մու-  
րազը վոր ամեն ագամ նրա սիրտը կդադեր,  
յերբ կնայեր Աչեյի բոյ-բուսին:

Յերբ անկողինը ծալեց իրար վրա, Զոզանը  
բուխերիկին մոտեցավ. ենտեղ եր ամեն ոք Ա-  
չեն ջրով լիք իրրուխը դնում, որ Զոզանը  
լմեժի նստեր, որ ջերմ սրտով խողեյից Մա-  
մեյին բարի վերադարձ ու իրենց համբերու-  
թյուն խնդրեր:

— Վայ, Աչե, — գլուխն որորեց Զոզան, —  
մտահան ես արել, հա՞, ղնամիչ չենեմ<sup>1)</sup> ընդո-  
ջան... յարար ի՞նչ դառն միտք ա յեկել գըլ-  
խիդ, որ յոթը տարւա մեջ չմոռցած գոր-  
ծըդ եսոր մոռցար...

Եսպես խոսեց ինքն իրեն Զոզանն ու յերբ  
սադրից<sup>2)</sup> ներքե իջավ, գնաց գոմն իրրուխը  
փնտրելու՝ ահանջին հասավ ձիան խրխնջոց:

Զոզանը կանգնեց:

— Ես ինչ կլտեմ. սատանի փոճանք ա...  
չե, ձի յա ու ձիավարի եւ խրխնջում ա...

Զոզանը դէյրի փեշով սրբեց աչքերը, գո-  
մի յերդիկից արեւի առաջին շողքը ներս եր ըն-  
կել ու ամեն որվա դատարկ մսուրի գիմպց  
պսպղում եր բող ձիու հպարտ գլուխը...

— Վայ Աչե, — ելի Խոտեց Զոզանը, — հպարտ

1) Զեմ մեղադրում:

2) Թախտ:





1000

մեյվան դա դայեյին իմաց չեն տա... ինչի՞  
յես մեյվանի պատիւ մոռցեր եմ, ինչի՞ յես իմ  
քար ու քոլ ընկած Մամեյի սաղաղին գլխիս  
վրա չեյի՞ դնի մեյվանին... վայ Աչե, վայ  
բռնեմն վայ...

Ու Զողանի վոտքերն ուժ առան, յոթ տար-  
վա մեջ առաջին անգամ մոռացավ լմեժն ու  
վաղեց հողեն, են հողեն, ուր Աչեն յոթը տարի  
մենակ իր Մամեյին Վր սպասել:

Զողանը դուռը բացեց ու ներս մտավ:

Արևի մի շողք ել եստեղ եր ներս ընկել,  
սփռվել անկողնի վրա...

Զողանը մեկ ել ծմրկտաց ու ճմռեց աչքե-  
րը...

— Ես ինչ ե... թե ձին փորձանք չեր սա-  
տանի, ես ել չե...

Աչեն պառկած ե, կողքին ել ջահել տղա.  
են ինչ ել կարոտով ե դրկել Աչեյին, մինչև ար-  
մունիը քշտված առնական թևը փաթ ե արել  
Աչեյի վզով ու յոթը տարվա մեջ չխոնարհած  
գլուխը զարկել ե դռին, ու ինչ ել անուշ քնի  
մեջ են...

— Վայ Աչե, վայ. քո նամուսն իմալ  
նամուս ա, իմ աչքի լուսով պահած Մամեն,  
(իմ բրինդար<sup>1)</sup>) Մամեն, ես ա յոթը տարի դարի-  
բություն ա գացել, հպա քո նամուսն իմալ  
նամուս եր, Աչե ջան, որ դու յոթ տարվա ուխ-

1) Վերափոր

տը խախտեցիր, որ դու Մամեյի քուղը ծռեցիր, որ դու ջահել տղին ծոցդ առար...

Ու Չոզանի յերակները պրկվեցին ջահել որերի թափով ու Չոզանի յերակներում արյունը յեռաց վարարեց ու նա խոյանքով հասավ պատը. ենտեղ եր մեյվանի ասպապը, ենտեղ եր մեյվանի մուրադով սրբած մաքրած այնալուն:

Չոզանը փութով ձեռն առավ այնալուն, ու նրա վիրավորված հոգուց ուժ ստացած ձեռքերում այնալուն որորաց թեթև վոստի նման: Մաժեց մեկ անգամ լուքն, փողը դեմ արեց Աշեյին հրապուրող մեյվանի ճակատին:


— Իգիթ տղա յե, — ասեց, — ճակտից պիտի դարկեմ...

Ասեց ու կանգ առավ:

— Ձե, Աշե ջան, չե, եսպես չեղնի, այնալուն ձեն կը հանա, դեղ հարեան կիմանա, Դահար աղեն կը լսա սիրտ կը հովնա, քո յոթ տարվա պայծառ պահած անունն, Աշե ջան կը կոտրի, իմ Մամեն լե կուգա կիմանա, կը հըռկի,<sup>1)</sup> ու սիրտ լե կը կոտրի...

Ու այնալուն եյի հետ տտրավ, ելի կախեց պատից:

Հետ դարձավ, տեսավ, որ մեյվանն շտապելուց խանչալը թողել է բարձի կողքը, թըռավ վերցուց, պատյանից հանեց կեռ, պսպրդան խանչալն ու թափ տվեց Մեյվանի գլխավերև.





—Վայ թե ուժս պակսել է, հա՛, մեկ զարա-  
կով վայ թե չսպանեմ չե՞, Աչե ջան... ես թա-  
վուր իդիթ տղեն կմեռնի՞ պառավ Ջողանի  
մեկ զարկով... չե, վայ թե սաղ մնա... ձեն  
եյնի, խալխն իմանա, Աչեյի անուռը կոտորի,  
Մամեն լե գա, լսա, ըռըկի, սիրտ լե կոտորի...

Խանչալն ել հետ դրեց պատյանը...

Ջահեղները դեռ անուշ յերազի մեջ եյին...

Մեյվանի շրթունքները բաց ու խուփ եյին  
անում:

Ո՛հ, Աչեյի համբույրը, բոցոտ ու այրող  
համբույրը դուր ե յեկել մեյվանին ու մեյվանը  
յերազի մեջ ել չի դադարում համբուրելուց  
Ջողանի մուրազով պահած հարսին...

— Ձե, ասաց Ջողանը, — պետք ե շտապել,  
չիմի կզարթնեն ու են ժամանակ ուշ կլինի...

Ու ելի թո՛ւով Ջողանը դեպի մեյվանի աս-  
պապը, քաշեց դուրս բերեց յերկեն թուրը:

— Ես հարմար ե, — ասեց, — ես դռը  
կմանա ու թիղ մեկ դռշակից դնն կնցնի... Ձեն  
չեյնի, խալխ չիմանա, Դահարի սիրտը չի հո-  
վանա, Աչեյի անուռն չկոտորի, Մամեն լե չհուկի  
ու սիրտ լե չկոտորի...

Ու նորից պրկվեցին Ջողանի թևերը, նո-  
րից նոր հորձանքով արյունը յեռաց նրա ներ-  
սում և նա թուրն Աչեյի մազերի արանքից սեղ-  
մեց մեյվանի դռչին: Մեյվանը ցավից շուտ  
յեկավ, ընկավ մեջքին, Ջողանն ավելի ուժով  
սեղմեց՝ ու թուրը ծակեց անցավ կուրծքը,

հասաւ դռնակին, են եւ ծակեց անցաւ ու ամբացաւ գետնին:

Ձողանը զովացած խորը շնչեց ու նայեց Աշեյին: Աշեն որ մեյլանի շարժումից արդեն զարթնել եր նստեց անկողնում ու անգիտակ նայեց չորս կողմը, նայեց Ձողանի ինքնաբաւական գեմքին ու դեռ ջեր նայել մեյլանին վոր տաք արյունն արդեն խտուտեց իր կողքը: Աշեն սթափակեց նայեց իր կարոտով դրկած Մամեյին, նրա դռչին ցցված թրին ու ամեն ինչ հասկացաւ:


Հետո Աշեն նայեց Ձողանին, ապա ծուլմազերը թափաւ՝ զցեց իր դեմքին ու մազկլտաց.

— Այ մեր, իմ խղիթ Մամեն յոթ տարի կովաւ, չսպանւաւ, բսկի բրինդար չեղաւ, ես ինչ արիր դու, հա՞:

Ու Ձողանն եւ հասկացաւ, հասկացաւ որ Աշեն են Աշեն եր, որ դիք եր պահել Մամեյի քոլողը, Մամեյի, որ ենպես անմուրաղ մնացմուրազով պահած մոր ձեռքից: Ու Ձողանը դուրս քաշեց թուրը տղայի դռչից, արյունը նոր հոսանքով դուրս ժայթքեց. Ձողանը բնկաւ այդ դռչին ու արյունը ներկեց նրա դեմքը...

— Ախ Մամե, — վողբաց Ձողանը, — Մամե, Մամե, քո մեր յեթիմ ա, քո մեր մալուլ ա, Մամե, Մամե... Քո մեր դալուլ ա, քո մեր դալուլ ա, Մամե, Մամե... Ախ, տղիս արյունը





ծով ա... Մամե, վո՞ր դուշմանը քո իգիթ դո-  
չից ենպես արյուն կքաշեր, հա՞ Մամե ջան,  
Մամե: Ախ իմ անբախտ ու անմուրազ մա-  
մե... Քո դայեն թող իր ծամեր կտրա Մամե,  
Մամե. թող աշխարհ ու ալամ քո ռաբան<sup>1)</sup> մոր  
դարդն իմանա, Մամե, Մամե, Մամե...

Աչեն եւ ձենը խառնեց մոր ձենին, վող-  
բաց որ ու դիշեր:

Ու յերբ Զողանի ու իր՝ արցունքները չոր-  
ցան, թարու<sup>2)</sup> շինեց, սիրած մոր ձեռքով  
սպանված աղին նրա մեջը դրավ. թարուն բարձ  
բացրեց իր հերոսակա՞յ-պինդ ուսին, յոթն  
արեւի փաթ վողբալով, մահալից մահալ ման  
ածեց ապա հանեց բարձը սարի ամենաբարձր  
կատարին ու թաղեց արծիվնէրի բնի մոտ, վոր  
են արծիվներն ամեն որ բարձրից նայեն աշ-  
խարհին, տեսնեն Աշեյին, են Աշեյին, վոր  
յոթ տարի Մամեյի քոլողը դիք պահեց ու  
ելի կը սլահի, վոր Մամեն չհրսիի ու սիրտ  
ի չկտորի...

1) Վոր

2) Դագաղ



## ՍԻՐԱՍԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին գիրք.— ՀԱՐՅԻՔ ՆԲԱՆՑ (վեպ)

1931 թ. Մոսկովա. ԽՍՀՄ Ժողովուրդների հրատարակչություն (սպառված).

Երկրորդ գիրք.— ԿՅԱՆՔԻ ԿԱՐՈՏԸ (շուտով լույս կը տեսնի):

1. Յեռացող կաթսան

2. Նվերը

3. Կլանքի կարոտը

4. Գարնան ծաղիկներ

5. Արծիվն ու վոլդը (դրամատիկա)

6. Մամեն ու Աշեն

7. Ասմար

8. Թալիսման

## ՊԱՏՐԱՍ Ե ՏՊԱԿՐՈՒԹՅԱՆ

Յերրորդ գիրք.— ՄԱՆՑԱԿ (վեպ)

Զորրորդ գիրք.— ՅԵՍԹԵՐ (վեպ)

ՀԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՒՆ. ԳՐԱԴ.



FL0045578

9. 50 4.

4. 50 4.

8882